

ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Հ. Հ. ՕՅԱՆՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳԴՀ-ի Հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս*

Միջնադարյան Հայաստանում տարբեր վայրերում գործել են ըստ բնույթի՝ հոգևոր և աշխարհիկ, ըստ տեսակի՝ պետական, համայնքային, վանական, եկեղեցական-ծխական, մասնավոր, ըստ աստիճանի՝ ցածր-տարրական, միջին-միջնակարգ և բարձր-բարձրագույն դպրոցներ:¹ Բարձր տիպի դպրոցները գործել են վանական և պետական դպրոցական համակարգերում: Երկրի ծանր կացության հետևանքով միջնադարյան վանքերը մեծ դեր են խաղացել ուսումնատեղ հայ երիտասարդների կրթության կազմակերպման հարցերում: Վանքերն ունեցել են հսկայական հողատարածություն, այգիներ, տնտեսական շինություններ, ջրանցքներ, ամասուններ, հարկատու գյուղեր և այլն:² Ունենալով հսկայական միջոցներ՝ խոշոր վանքերին կից գործել են դպրանոցներ, ճեմարաններ, գրատներ և այլն: Հիշատակության են արժանի Սանահինի, Հաղպատի, Աղթամարի, Շիրակի, Տաթևի, Մեծփա, Կիլիկիայի և այլ դպրոցները: Դպրոցները պատրաստել են ոչ միայն հոգևորականներ, այլև գիտության, գրականության, ճարտասանության, քերականության, նկարչության և այլ բնագավառների մասնագետներ: Ահա թե ինչու, միջնադարյան վանքերը հարուստ են զանազան քանդակներով, որմնանկարներով, ուշագրավ արձանագրություններով, որոնք վերաբերվում են մեր պատմությանը, հոգևոր ու աշխարհիկ կյանքին:

Խոշոր վանքերը մեծ տեսակարար կշիռ են ունեցել նաև երկրի հասարակական-քաղաքական, տնտեսական կյանքում: Սակայն, ճակատագրի բերումով, հայ դպրոցին վիճակված էր մերթընդմերթ փակվելու, տեղից-տեղ տեղափոխվելու, զավթիչներից պաշտպանվելու անհրաժեշտությունը, որը խոչընդոտել, բայց չի ընկճել հայ դպրության գործելու անկոտրում ոգին:

Այդ է պատճառը, որ վանքերը, դպրոցները կառուցվել են անմատչելի վայրերում, բանուկ ճանապարհներից հեռու՝ միաժամանակ ծառայելով իբրև թաքստոցներ մարդկանց ու եկեղեցական գույքի պահպանման համար:

Ըստ Ստ. Օրբելյանի, այդ առումով աչքի է ընկել նաև Տաթևի վանքը, որը հիմնադրվել է 4-րդ դարում, 5-8-րդ դարերում եղել է դպրության կենտրոն:³ 9-րդ դարից սկսած այն դարձել է Սյունաց նահանգի հոգևոր կենտրոնը: 985թ. կառուցվել է Տաթևի մեծ եկեղեցին և հարակից շինությունները՝ թաքստոցները:⁴

Այնտեղ են տեղափոխվել Սյունաց դպրոցի ճանաչում գտած բանիմաց շատ վարդապետներ ու կրոնավորներ, որոնք իրենց գիտելիքներն են հաղորդել դպրո-

¹ *Միմոնյան Յ.*, Ակնարկներ հայ դպրոցի ու մանկավարժական մտքի պատմության, Երևան, 1971, էջ 29:

² *Մովսիսյան Ա.*, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 73:

³ Նույն տեղում, էջ 75:

⁴ *Օրբելյան Ստ.*, Պատմական նահանգ Սիսական, 1910, էջ 245:

ցի սաներին /կրոն, բնական և արտաքին գիտություններ/: Տաթևի դպրոցը իրեն է ձգել Հայաստանի տարբեր գավառների ուսումնատենչ շատ երիտասարդների, որոնց ուսանել են ճանաչված փիլիսոփաներ, երաժիշտներ, քերականներ, բնախույզներ, երկրաչափներ, գրչության արվեստի ներկայացուցիչներ, թուղթ և մագաղաթ «կոկողներ», շնորհալի «կազմարարներ», փորագրող արհեստավորներ և այլն:⁵ Վանքում գրվել և թարգմանվել են գրքեր, ուսուցողական գրականություն, որը նորություն էր միջնադարյան հայ դպրության կյանում: Ինչպես միջնադարյան շատ դպրոցներ, Սյունաց հոգևոր կենտրոնն ու դպրոցը բոլոր ժամանակներում չի կարողացել պահպանել իր համբավը և 12-րդ դարի վերջերին, անբարենպաստ պայմանների հետևանքով, տեղափոխվել է Նորավանք: Տաթևի դպրոցը որպես համալսարան հիշատակվում է 1390-ական թվականներից՝ սկսած Հովհաննես Որոտնեցու և նրա աշակերտ Գրիգոր Տաթևացու ռեկտորության շրջաններից և գործել է մինչև 1435թ.: Որոտնեցին ուսանել է Գլաձորում, աշխատել է բազմաթիվ դպրոցներում, ապա տնօրինել է Տաթևի բարձր տիպի դպրոցը /համալսարանը/: Գրել է բազմաթիվ փիլիսոփայական, աստվածաբանական, մանկավարժական երկեր: Մեծ գիտնական-ուսուցչապետը բարեփոխել է դպրոցի ուսման բովանդակությունը հատկապես արտաքին գիտություններով:

Նա դարձավ նոր դպրոցի հիմնադիր, փոխեց Տաթևի դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների մեթոդաբանությունը: Նա պարտադիր է համարել բնական գիտությունների ուսուցումը, ինչպես նաև սովորողների գործնական կարողությունների զարգացումը. նրանք պետք է կարողանային արտագրել, նախշել գրքեր, իմանային մագաղաթ, թանաք պատրաստել և այլն:

Հետագայում համալսարանի ավանդույթները շարունակել և զարգացրել է նրա շնորհաշատ աշակերտ Գրիգոր Տաթևացին, որը կատարելագործել է ուսումնասիրվող առարկաների ծրագրերը, կազմել դասագրքեր, նոր շունչ հաղորդել հատկապես գրչության արվեստին /պատրաստել է շուրջ 60 գրիչ/:

Գրիգոր Տաթևացին իր ելույթները եղել է փիլիսոփա, մանկավարժ, աստվածաբան, տնտեսագետ, կրոնական մեծ գործիչ: Տաթևի և այլ բարձր տիպի դպրոցում վարել է բազմաթիվ դասընթացներ՝ փիլիսոփայություն, աստվածաբանություն և քերականություն: Նրա գրչին են պատկանում շատ ստեղծագործություններ՝ «Գիրք հարցմանց», «Քարոզագիրք», «Ոսկեփորիկ», կրոնափիլիսոփայական բնույթի գործեր:

Լինելով կարգապահ ու խստապահանջ ուսուցչապետ, Տաթևացին նույնը պահանջել է իր ուսուցիչներից՝ ունենալ լուսավոր միտք ու անարատ վարք: Կարևորել է մանկան վաղ հասակից կրթելը, քանի որ նրա զգայարանները զգալուն են արտաքին աշխարհի նկատմամբ:

Հոգեբանամանկավարժական գրականության մեջ շատ է խոսվում անգլիացի մեծ փիլիսոփա-մանկավարժ Ջոն Լոկի այն հայտնի դրույթի մասին, որ նորածին հոգին նման է «անգրել տախտակի», որի վրա գրում է բնությունը: Մինչդեռ նրանից շուրջ 300 տարի առաջ այդ գաղափարին հանգել է Գրիգոր Տաթևացին. մանկան հոգին ի ծնե «անգիր պնակիտ է, կամ լվացած մագաղաթ, ինչ որ գրեն

⁵ **Մովսիսյան Ա.**, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 101:

նրա վրա այն էլ կվերցնի»:⁶ Նրա մանկավարժական հայացքներից ուշագրավ է նաև այն, որ գիտելիքները ձեռք են բերվում կրթության և կենսափորձի միջոցով: Եղել է աշխարհի զգայական ընկալման կողմնակից, գտել, որ մարդկային միտքը վերացարկուն է իրերի հատկությունները, տեսակավորում դրանք ըստ հատկանիշների:⁷

Որպես գիտակրթական կենտրոն, Տաթևի համալսարան են հավաքվել շուրջ 500 նշանավոր դեմքեր՝ հոգևորականներ, փիլիսոփաներ, երաժիշտներ, նկարիչներ, գրողներ և այլ բնագավառի երևելիներ: Համալսարանը ունեցել է 3 լսարան՝ ներքին և արտաքին գրոց, գրչության արվեստի և երաժշտության:⁸ Առաջին լսարանում սովորողներն ուսումնասիրել են հունանիտար և հասարակական գիտություններ, այդ թվում նաև մանկավարժություն, երկրորդում՝ գրչության արվեստ, գրքի ձևավորում, մանրանկարչություն, որմնանկարչություն, երրորդում՝ երաժշտության տեսություն: Համալսարանի ձեռքբերումները այդքանով չեն սահմանափակվում:

Կրթօջախն ունեցել է իր կանոնադրությունը, գիտական աստիճանաշնորհման համակարգը, ուր ուսանելու են եկել Հայաստանի տարբեր գավառներից 150-300 երիտասարդներ:⁹ Հիշատակության են արժանի համալսարանի շատ շրջանավարտներից՝ Թովմաս Մեծփեցին, Առաքել Սյունեցին, Մաթևոս Զուղաբեցին, Բարսեղ Բաղիշեցին և ուրիշներ: Ուսումնառության 7-8 տարիների ընթացքում շրջանավարտները ձեռք են բերել վարդապետի, քարոզիչի, մանկավարժի, գրիչի, երաժիշտի և այլ մասնագիտություններ:

Համալսարանն ունեցել է հարուստ մատենադարան: Սակայն Տաթևացու մահը /1410թ./ և բարբարոսների հետագա արշավանքները վատ են անդրադաձել համալսարանի գործունեության վրա և 1435թ. մատենադարանը կողոպտվել է օտար զավթիչների կողմից: Մատենադարանը գործել է մինչև 1911-12թթ., իսկ այնուհետև մնացած գրքերը տեղափոխվել են Էջմիածին, ապա Երևանի մատենադարան:¹⁰

Ուրախալի է, որ վերջին շրջանում լուրջ աշխատանքներ են տարվել Սյունաց հոգևոր կենտրոնը զբոսաշրջության ակտիվ գոտի դարձնելու, մեր մշակութային զանգեքները վերակենդանացնելու ուղղությամբ:

УНИВЕРСИТЕТ ТАТЕВА

А. Г. ОГАНЯН

Статья посвящена университету Татева, подчеркнута большая роль в деле основания университета Ованеса Врогнецкого и его талантливого ученика Григора Татевского.

⁶ *Սիմոնյան Յ.*, Ակնարկներ հայ դպրոցի ու մանկավարժական մտքի պատմության, Երևան, 1971, էջ 68:

⁷ ՀԱ Հանրագիտարան, Երևան, 1977թ., հատոր 3, էջ 221:

⁸ ՀԱ Հանրագիտարան, Երևան, 1985թ., հատոր 11, էջ 542:

⁹ Նույն տեղում, էջ 542:

¹⁰ Նույն տեղում, էջ 543:

The article is devoted to the university of Tatev. In foundation of the university the great contribution of famous philosopher and teacher Hovhannes Vorotnetsi and his talented student Grigor Tatevatsi is highlighted in the article.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՈՃԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ա. Վ. ՂԱՎԹՅԱՆ

ԳՊՀ Հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս

Գաղտնիք չէ, որ բոլոր դեպքերում էլ մարդկանց փոխհարաբերությունների վրա մեծ ազդեցություն է ունենում սեփական մտքերի, հուզական վիճակների ճիշտ արտահայտումը, ինչպես նաև՝ ուրիշի ճիշտ ընկալումը, որը հաղորդակցման հոգեբանության ուսումնասիրման հիմնական առարկան է: Սակայն այլ բնույթ ունի հաղորդակցումը ուսուցման և դաստիարակության գործընթացում:

Ուսուցիչների մի մասը, եթե չասենք մեծ մասը, դեռևս լավ չի պատկերացում կապը ուսուցման արդյունավետության և հաղորդակցական ընդհանուր կարողությունների և հատուկ կարողությունների ձևավորման միջև:

Դիտարկումները ցույց են տալիս, որ ուսուցիչները հաճախ չունեն տարրական գիտելիքներ հաղորդակցման կարողությունների վերաբերյալ, առավել ևս, չեն տիրապետում այն ձևերին ու մեթոդներին, որոնք անհրաժեշտ են դրանց ձևավորման համար:

Ընդհանուր առմամբ, մանկավարժական գործընթացը մարդկանց միջև հատուկ կերպով կազմակերպված հաղորդակցում է, որի ընթացքում փոխանցվում են գիտելիքներ, վերարտադրվում ու յուրացվում է պատմահասարակական փորձը՝ մարդկային գործունեության տարատեսակների յուրացման ընթացքում:

Այստեղից հետևում է, որ ուսուցման և դաստիարակության որակը ուղիղ համեմատական է ուսուցման գործընթացի մասնակիցների միջև հաղորդակցման որակի հետ: Որոշ հեղինակներ նշում են, որ **հաղորդակցական կարողություններն** անհրաժեշտ են մարդուն մտքերի հստակ արտահայտման կամ ուրիշի մտքերի ճիշտ ընկալման համար: Եվ պարզ է, որ դրանք ձևավորվում են արդեն դպրոցից, երբ տեղի է ունենում ուսումնական և դաստիարակչական նպատակադրմամբ հաղորդակցում ուսուցչի և աշակերտի միջև: Ուսուցման գործընթացում հաղորդակցական կարողությունների ձևավորման համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր աշակերտ գործնական ընդգրկում ունենա ուսուցման գործընթա-